ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 Նոյեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

154
(3004)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԳՆ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ «ՎԻԶԱՆԵՐԻ ԲԻԶՆԵՍ» Է ԱՐԵԼ. ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունում սկանդալ է պայթել. «Ժողովուրդ» օրաթերթը աղմկահարույց բացահայտումներ է արել այն մասին, որ ՀՀ ԱԳՆ աշխատակից վարորդը, որը, ըստ քաղաքացիների վկայության, սպասարկել է ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանին, մուտքի վիզաներ տրամադրելու օժանդակության համար մարդկանցից գումար է վերցրել:

Հետհեղափոխական իշխանության ներկայացուցիչները, որ իշխանության եկան կոռուպցիան մերժելու խոստումներով, կոռուպցիոն ամենատարբեր սխեմաների մեջ են հայտնվել՝ հատելով անգամ միջպետական անթույլատրելի սահմանները:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն են դիմել երկու քաղաքացի (կանայք խնդրեցին իրենց անուններն ու դեմքերը չհանրայնացնել՝ թիրախավորումից խուսափելու համար) եւ հայտնել, որ ցանկացել են երկու ընտանիքով՝ 8 անձով, մեկնել ԱՄՆ:

Նրանք դիմել են «Ավա թրեվլ» տուրիստական ընկերությանը՝ Նունե Սոֆյանին, որը վստահեցրել է, որ իրենք կստանան վիզա, կմեկնեն:

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցների նկարագրմամբ՝ Նունեն ներկայացրել է, որ գործընթացը կլինի այսպես. ընտանիքներից որոշ ներկայացուցիչներ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում աշխատանքի կանցնեն, որից հետո կդիմեն դեսպանատուն եւ վիզա կստանան, բայց ամեն անձի համար պետք է վճարել 7000 ԱՄՆ դոլար: Հավաստիացումները ստանալուց հետո՝ քաղաքացիները վաճառել են իրենց բնակարանները եւ գրասենյակում 10 հազար դոլար տվել Նունեին, իսկ հետո վերջինս ասել է, որ 7000 ԱՄՆ դոլար էլ պետք է վճարեն ԱԳՆ-ի դիմաց մի մարդու, որը, հետագայում պարզվել է, ԱԳՆ-ում աշխատող վարորդ Երջանիկ Ումրշատյանն է:

⇨ էջ 4



ՔՊ-ական Անդրանիկ Քոչարյանի հերթական խոստումը մնաց օդի մեջ կախված: Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Անդրանիկ Քոչարյանը դեռ սեպտեմբերին հայտարարել էր՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովն ավարտել է աշխատանքները, եզրակացությունը պատրաստ է, արդեն հոկտեմբերին նամակով դիմելու է ԱԺ նախագահին՝ դռնփակ նիստ հրավիրելու համար, որի ժամանակ էլ կներկայացվի «մի քանի հարյուր էջից բաղկացած զեկույցը»: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Անդրանիկ Քոչարյանը մինչ օրս չի դիմել ԱԺ նախագահին, ոչ էլ զեկույցն է հրապարակված՝ թեկուզ գաղտնիության ռեժիմով: «Ժողովուրդ» օրաթերթին ԱԺ մամուլի խոսնակ Մովսես Հարությունյանը հայտնեց, որ փակ նիստ հրավիրելու հարցով նամակ չեն ստացել: Դրանից առաջ եւս Անդրանիկ Քոչարյանը ժամկետներ էր նշել. դեռ ապրիլին հայտարարել էր՝ 44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողովի զեկույցը կներկայացվի մայիսի վերջին կամ սեպտեմբերին: Բայց այս ժամկետներն էլ չեն պահվել. ձգվում ու ձգվում են, իսկ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցը մնում է գաղտնի պահված: «ԱԺ կանոնակարգ» օրենքի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, զեկույցը բաց քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում, հրապարակվում է նաեւ ԱԺ կայքում, իսկ փակ մասը քննարկվում է գաղտնի ռեժիմով: Եվ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, որ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքով պարտավոր է ԱԺ բնականոն գործունեությունն ապահովել, չի կարողանում հետեւել կանոնակարգի պահանջներին, որպեսզի ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետներն ու պարտադիր ներկայացվելիք զեկույցները ներկայացվեն պատշաճ կարգով եւ ժամանակին: Իսկ ԱԺ կանոնակարգի խախտումը օրինախախտում է:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ առաջիկայում ՄԻԵԴ-ը կստանա Ռոբերտ Քոչարյանի գործը քննող նախկին դատավոր Աննա Դանիբեկյանի դիմումը: Ինչպես հայտնի է, ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը դադարեցրեց Երեւանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի լիազորությունները՝ էական կարգապահական խախտման հիմքով: ԲԴԽ նախագահը, առանց իր իրական նպատակները թաքցնելու, հայտարարեց, որ Դանիբեկյանին հեռացնում են մեր ժամանակների «ամենակարեւոր» դատական գործի պատճառով, քանի որ նա, իրենց կարծիքով, միտումնավոր է ձգձգել Ռոբերտ Քոչարյանի եւ Սիլվա Համբարձումյանի գործով դատաքննությունը՝ մինչեւ վաղեմության ժամկետը լրանա: Ըստ արդարադատության արդեն նախկին նախարար Գրիգոր Մինասյանի՝ Դանիբեկյանը կոպիտ անփութությամբ խախտել է դատավորի վարքագծի կանոնները, որի հետեւանքով ամբաստանյալները, այդ թվում՝ Ռոբերտ Քոչարյանը, ազատվել են պատասխանատվությունից՝ հանցանքի վաղեմության ժամկետի լրանալու հիմքով: «ԲԴԽ-ն հարկ է համարել ընդգծելու, որ երկար ձգձգված ու վաղեմության ժամկետի ավարտման հիմքով կարճված Ռոբերտ Քոչարյանի գործն ուներ բացառիկ կարեւորություն թե՛ վարույթում ներգրավված անձանց շրջանակի կարգավիճակով, թե՛ նրանց մեղսագրվող արարքների քրեաիրավական բնույթով եւ ծանրության աստիճանով: Հետեւաբար, դատավոր Դանիբեկյանը պարտավոր էր գիտակցել, որ արդարադատություն է իրականացնում ՀՀ դատաիրավական պրակտիկայի պատմության ամենակարեւոր գործերից մեկով, եւ պետք է արդյունավետ կազմակերպեր եւ ողջամիտ ժամկետում իրականացներ արդարադատություն»,- ասված է ԲԴԽ որոշման մեջ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԱԺ նախագահի հանրային վարքը դատապարտելի է դարձել անգամ ՔՊ-ամերձ օմբուդսմենի համար: Հոկտեմբերի 22-ին ՀՀ Ազգային ժողովում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, դիմելով Արմենուհի Կյուրեղյանին, ասաց. «Ես հասկանում եմ, որ ձեր վրա թքող չկա...»: «Հայաստան» խմբակցությունից Լիլիթ Գալստյանն ասաց՝ չե՞ս ամաչում, եւ ստացավ «չէ» պատասխանը: «Ժողովուրդ» օրաթերթը այս միջադեպի առիթով հարցմամբ դիմել էր ՀՀ ՄԻՊ Անահիտ Մանասյանին՝ հետեւյալ հարցերով՝ 1) ինչո՞ւ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը առ այսօր միջադեպին չի արձագանքել, 2) ճի՞շտ եք համարում արդյոք ԱԺ նախագահի նման պահվածքը, թե՞ ոչ: Խնդրում եմ արձագանքել վերոնշյալ միջադեպի ընթացքում ԱԺ նախագահի արտահայտությանը»: Հարցմանն ի պատասխան՝ ՄԻՊ գրասենյակից հայտնել են, որ արձագանք կամ մեկնաբանություն օմբուդսմենը կարող է տալ միայն բողոքի դեպքում: «Վերոգրյալի հաշվառմամբ՝ պաշտպանը չի մեկնաբանում առանձին պաշտոնյաների եւ հանրային ճանաչում ունեցող անձանց խոսքը»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԻԼԱՅԵԹԱՑՄԱՆ ԵՆ ՏԱՆՈՒՄ», ՄԱՆՎԵԼՅԱՆ

Արցախի հայաթափումից, 120 հազար մարդու անտուն թողնելուց հետո, երբ հայկական կողմը միջազգային կառույցներին է դիմում օգնության, խնդիրների լուծման առաջարկների, աջակցության համար, միջազգային կառույցների դատապարտանը կա՛մ շատ լոզված է լինում, կա՛մ էլ դատապարտանը լինում է լռությունը: Ի՞նչն է սրա դատճառը՝ դարզ չէ:

«Ժողովուրդ» օրաթերթը այս թեմայի շուրջ զրուցել է միջազգայնագետ Արմեն Մանվելյանի հետ:

-Պարոն Մանվելյան, ինչի՞ հետեւանքով է, որ Արցախի հայաթափումից, 120 հազար մարդու անտուն թողնելուց հետո, երբ միջազգային ցանկացած կառույցի ենք դիմում՝ մեր խնդիրները բարձրաձայնելու, դրանց լուծում տալու համար միջազգային կառույցներից (ՄԻԵԴ, ԵԽԽՎ) ստանում ենք միայն լռություն: Ինչի՞ հետեւանքով է սա՝ ըստ Ձեզ: Իշխանության մեղքը կա՞ այստեղ:

-Խնդիրն այն է, որ միջազգային բոլոր կառույցներում մենք խնդիրներ ունենք, պայմանավորված առաջին հերթին, մեր քաղաքական իշխանության, մեղմ ասած, կրավորական դիրքի հետ Արցախի խնդրի վերաբերյալ: Գոնե ես իմ ընկերների հետ, սեփական կապերով դիմում ենք տարբեր միջազգային կառույցների, իրենք պատասխանում են, որ ձեր իշխանությունների կողմից այս հարցին բավականին պասիվ դիրքորոշում կա, ու շատ դեպքերում նույնիսկ որոշում կա, որ իրավիճակը պետք չէ սրել, փորձում ենք իբրեւ Ադրբեջանի հետ ընդհանուր հայտարարի գալ, իսկ ձեր այս տիպի հայտարարությունները մեզ խանգարում են: Այսինքն՝ հենց գործող քաղաքական ռեժիմն է իր քայլերով ամեն բան անում, նույնիսկ ինչ-որ ձեւով որպես փաստաբան է հանդես գալիս Ադրբեջանի համար՝ թույլ չտալով, որպեսզի բարձրաձայնենք այն աղետը, որը կատարվել է Արցախում, այն հայաթափումը, փաստացի ցեղասպանությունը, որը տեղի է ունեցել այնտեղ:

-Այսինքն՝ կարելի՞ է ասել, որ միջազգային կառույցները ավելի շատ են մտահոգված մեր խնդիրներով եւ դրանց լուծումներով, քան այսօրվա իշխանությունը: Ինչո՞ւ է այդպես:

-Միանշանակ կարելի է պնդել, որովհետեւ, օրինակ, եվրոպարլամենտն ընդունում է որոշումներ, որոնց դեմ, ես գիտեմ, որ Հայաստանի իշխանությունները որոշակի նույնիսկ ի հեճուկս քայլեր են փորձում կատարել. նույնը կա պայմանավորվածություն Շվեյցարիայի խորհրդարանի կողմից՝ ի պաշտպանություն Արցախի ընդունված որոշումների եւ այլն... եւ հայաստանյան այն կառույցները, օրինակ՝ Վարդան Օսկանյանի ղեկավարած հանձնաժողովը, փորձում են տարբեր երկրներում աշխատանքներ իրականացնել, միշտ հանդիպում են հենց այդ խոսքին, թե՝ «գիտե՞ք, ձեր իշխանությունները դիմում են մեզ՝ոչ մի կերպ չաջակցելու, չօգնելու, Արցախի հետ կապված խնդիրներին չնպաստելու եւ այլնի համար»: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ այս կառույցները ավելի հայամետ են դարձել, քան Հայաստանում գործող քաղաքական ռեժիմը:

-Ո՞րն է այդ դեպքում իշխանավորների դրդապատճառը՝ չլուծելու մեր խնդիրները:

-Խնդիրը հետեւյալն է. բացի իրենց էությամբ, տեսակով, գաղափարախոսությամբ հակահայ լինելու իրենց այս տեսակին՝ իրենք նաեւ մեկ այլ խնդիր են լուծում՝ անձնական, այն է՝ ամեն գնով մնալ իշխանության, որ իրենց գոյատեւման եւ գոյաբանական խնդիրը լուծեն, քանզի հասկանում են՝ նման հանցանքներ անող քաղաքական ուժը կամ կլանը չի կարող իշխանությունը ոչ մի կերպ հանձնել մեկ այլ ուժի, որովհետեւ այդ դեպքում իրենք գոյաբանական խնդիր կունենան: Հետեւաբար, այս ճանապահին, այս խնդիրը լուծելու հարցում, իրենք Հայաստանի արտաքին քաղաքականությունը Մոսկվայից կամ հյուսիսից տեղափոխեցին դեպի Արեւմուտք՝ հույս ունենալով, որ իրենց հակառուսականության մեջ, ի դեմս Արեւմուտքի, կտեսնեն գործընկերների, որոնք նաեւ որոշակի երաշխիքներ կտան՝ իշխանության մնալու համար: Իրենք, սակայն, այստեղ հանդիպեցին մի իրավիճակի, որ հասկացան՝ Արեւմուտքը նմանատիպ երաշխիքներ իրենց տալ չի պատրաստվում եւ այս պայմաններով այս աշխարհաքաղաքական խաղացողի կամ տիրոջ փնտրտուքի ճանապարհին, իրենք հանկարծակի հայտնաբերեցին, որ դա կարող է լինել պաշտոնական Անկարան: Այսինքն՝ Թուրքիան կարող է իրենց գոյատեւման եւ գոյաբանական խնդիրները, նորից եմ կրկնում՝ իրենց անձնական խնդիրները, «նեղկլանական» իշխանության մնալու հարցով, լուծել, եւ դա նրանք հայտնաբերեցին: Հետեւաբար այս պայմաններում Թուրքիայի հետ ամեն գնով հարաբերությունների բարելավման պայմաններում իրենք պատրաստ են բոլոր, պահանջները կատարել, որոնցից առաջինն է՝ գալ համաձայնության պաշտոնական Բաքվի, Ադրբեջանի հետ: Իրենք հայտնվել են աշխարհաքաղաքական մի այնպիսի փակուղու մեջ, որից դուրս գալու միակ ելքը տեսնում են Անկարայի հետ լեզու գտնելու միջոցով, այսինքն՝ մաս կազմելու թուրանական աշխարհի, կամ Թուրքիայի թուրանական քաղաքականությունը սպասարկող կառույց դառնալու եւ ամբողջ Հայաստանը ծառայեցնելու այդ թուրանիզմի գաղափարախոսությանը: Սա շատ վտանգավոր ճանապարհ է Հայաստանի եւ հայ ժողովրդի համար, որովհետեւ սա Հայաստանի «վիլայեթացման» կամ ադրբեջանցիների լեզվով ասած՝ արեւմտյան ադրբեջան տանելու ճանապարհ է:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՈՒՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում քննարկվեց 2025 թվականի պետական բյուջեի նախագիծը, որը ներկայացրեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Նախարարը նշեց, որ բյուջեն կենտրոնացած է երեք հիմնական ուղղությունների վրա. «...Դա դիմակայունության ամրապնդումն է, տնտեսական պոտենցիալի բարձրացումը, հարկաբյուջետային կայունության ապահովումը, նաեւ մակրոֆիսկալ ռիսկերի կառավարումը, որի ուղղությամբ տարբեր գործիքակազմեր են ներդրված բյուջեում»:

Ըստ նախագծի՝ 2025 թվականին կապիտալ ծախսերը կկազմեն 733 միլիարդ դրամ, ինչը 5,4 տոկոսով կգերազանցի 2024 թվականի ցուցանիշը: Կապիտալ ծախսերի շուրջ 56 տոկոսը ուղղվելու է պաշտպանության ոլորտին:

«Պաշտպանության ոլորտի ծախսերը կկազմեն 664 միլիարդ դրամ, ինչը 20 տոկոսով ավելի է 2024 թվականի պետական բյուջեով սահմանված պաշտպանության ծախսերից: Արդյունքում՝ այս ծախսերը ՀՆԱ-ում կկազմեն 6 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ բարձրանալով 0,7 տոկոսային կետով», - ասաց Հովհաննիսյանը:

Նախագծով նախատեսվում է նաեւ սոցիալական պաշտպանության ծախսերի ավելացում:

«Այստեղ ծախսերի մակարդակը կազմում է 905 միլիարդ դրամ, ինչը շուրջ 14 տոկոսով կգերազանցի 2024 թվականի ցուցանիշը», - նշեց նախարարը: Նրա խոսքով՝ այս ծախսերի մեծ մասը նախատեսվում է հատկացնել կուտակային կենսաթոշակներին, ինչը կկազմի ՀՆԱ-ի 8,2 տոկոսը՝ 0,6 տոկոսային կետով ավել:

Հանձնաժողովը դրական եզրակացություն տվեց նախագծին:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ

ՍԱՏՄ ղեկավար Արմեն Հայրապետյանը հրաժարականի դիմում է ներկայացրել: Այս մասին լրատվամիջոցներին հայտնել է ՍԱՏՄ խոսնակ Անուշ Հարությունյանը:

Հրաժարականի պատճառների մասին տեղեկատվություն հայտնի չէ:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն ու Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը լիակատար աջակցություն են հայտնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը եւ երկու երկրների միջեւ խաղաղության համաձայնագրի հնարավորինս շուտ ստորագրմանը:

Այս մասին ասված է Էմանուել Մակրոնի եւ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի ռազմավարական գործընկերության ամրապնդման հայտարարության մեջ, որը նրանք արել են Ղազախստանի նախագահի՝ Փարիզ այցի շրջանակներում:

«Նախագահները լիակատար աջակցություն են հայտնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը եւ համաձայնագրի հնարավորինս շուտ ստորագրմանը, որը թույլ կտա տարածաշրջանում արդար եւ կայուն խաղաղություն հաստատել՝ հարգելով երկու պետությունների տարածքային ամբողջականությունը եւ հիմնվելով 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի վրա»,- ասված է հայտարարության մեջ:

Նախագահներն ընդգծել են Հարավային Կովկասում կայունության կարեւորությունը Անդրկասպյան միջազգային տրանսպորտային երթուղու զարգացման համար:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԳՆ-Ն՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Չնայած Հայաստանի եւ Թուրքիայի պայմանավորվածությանը հարաբերություններն առանց նախապայմանների կարգավորելու վերաբերյալ Թուրքիան շարունակում է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը կապել Երեւանի եւ Բաքվի միջեւ կարգավորման գործընթացի հետ:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը Turkiyegazetesi-ին տված հարցազրույցում հայտարարել է, որ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները կկարգավորվեն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության պայմանագրի կնքումից հետո:

«Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները կկարգավորվեն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության ստորագրումից հետո», -ասել է նա:

Ֆիդանը հավելել է, որ Թուրքիան Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատումը համարում է կարեւոր տարր Հարավային Կովկասում կայունության ապահովման համար: «Մենք առավելագույն աջակցություն ենք ցուցաբերում պայմանավորվածությունների ձեռքբերմանը եւ ուրախ ենք տեսնել, որ կողմերը մոտենում են դրան»,-նշել է Ֆիդանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹՐԱՄՓԸ՝ ԱՄՆ 47–ՐԴ ՆԱԽԱԳԱՀ

Fox News-ի տվյալներով՝ ԱՄՆ նախագահական ընտրություններում հանրապետական թեկնածու Դոնալդ Թրամփը արդեն հավաքել է ընտրիչների 277 ձայն՝ ապահովելով իր հաղթանակը ԱՄՆ 47-րդ նախագահի ընտրություններում:

ԱՄՆ նախագահի եւ փոխնախագահի ընտրություններն անուղղակի են: Քվեարկելու իրավունք ունեցող ԱՄՆ քաղաքացիներն ընտրում են ոչ թե կոնկրետ թեկնածուներին, այլ Ընտրողների կոլեգիայի անդամներին՝ «ընտրիչներին»: «Ընտրիչներն» այնուհետեւ իրենց ձայնը տալիս են տվյալ նահանգում առավելագույն ձայներ ստացած թեկնածուի օգտին: Յուրաքանչյուր նահանգի կոլեգիայի անդամների թիվը համապատասխանում է Կոնգրեսում այդ նահանգի անդամների թվին: Այն թեկնածուն, որը ստանում է ընտրիչների ձայների բացարձակ մեծամասնությունը՝ 538-ից առնվազն 270-ը, ընտրվում է նախագահ:

ԱԴԱՄ ՇԻՖՆ ԸՆՏՐՎԵԼ Է ԱՄՆ ՍԵՆԱՏԻ ԱՆԴԱՄ

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահ Ադամ Շիֆն ընտրվել է Կալիֆորնիայի Սենատի անդամ: Այս մասին հայտնում է Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը (ANCA):

Կոնգրեսական Ադամ Շիֆը երկար ժամանակ ներկայացրել է երկրի ամենամեծ հայկական սփյուռքը եւ եղել է Կոնգրեսի հայկական հանձնախմբի փոխնախագահ:

Տասնամյակներ շարունակ նա իր ամերիկահայ ընտրողների հետ կողք կողքի պայքարել է նրանց պատմության ճանաչման համար՝ որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը վերապրածների, եւ պաշտպանելու իրենց ապագան, նրանց ընտանիքների ու սիրելիների ապագան:

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՄՆ նախագահական ընտրություններում իր հաղթանակի մասին հայտարարած Դոնալդ Թրամփը, Ֆլորիդայում դիմելով իր աջակիցներին, ասել է, որ դադարեցնելու է պատերազմները:

«Ես պատերազմներ չեմ սկսելու, այլ դադարեցնելու եմ դրանք», - ասել է նա:

Այս հայտարարությանն արձագանքել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Հակամարտությունների դադարեցման անհրաժեշտության մասին Թրամփի թեզը ենթադրում է, որ դրա համար պետք է լինեն կոնկրետ գործողություններ», - ՌԻԱ «Նովոստի»-ի փոխանցմամբ՝ ասել է նա:

ԼՍՈՒՄԸ ՄԵԾԱՆՈՒՄ Է

ՔՊ-Ի «ԹԵՎԵՐՆ» ՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՓՈՔՐԱԹԻՎ ՀԱՄԱԿԻՐՆԵՐԸ

ՀՀ իշխանության ներսում մի մեծ խումբ ցանկանում է դաշտանության հանձնաժողովի նախագահի դաշտոնից հեռ կանչել Անդրանիկ Քոչարյանին, իսկ մի մասն էլ դիտորդի կարգավիճակում է:

«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ խմբակցության ներսից ստացել է հետաքրքիր բաշխված մի ցուցակ, թե քանի խմբերի են բաժանված ֆրակցիայում, ով ում հետ ինչ փոխհարաբերություններ ունի:

Նախ՝ ՔՊ-ի պաշտոնական բաժանումները. ՔՊ վարչության անդամներ, որոնք եզակի արտոնյալներից են, որ Նիկոլ Փաշինյանին ամեն շաբաթ տեսնելու հնարավորություն ունեն, հետեւաբար՝ ավելի հեշտ են կողմնորոշվում ինչ խոսել, ինչ անել.

Արփի Դավոյան
Վաղարշակ Հակոբյան
Ռուբեն Ռուբինյան
Վահագն Ալեքսանյան
Վիլեն Գաբրիելյան
Ալեն Սիմոնյան

ինչպես նաեւ, ի պաշտոնե, այդ նիստերին մասնակցում են Արթուր Հովհաննիսյանն ու Հայկ Կոնջորյանը, Արուսյակ Մանավազյանը, որը ՀԺ-ի նախկին հաշվապահն է եւ Ալխաս Ղազարյանը, որը կուսակցական պաշտոն է զբաղեցնում:

Վարչության մյուս անդամները գործադիրից են:

Իսկ հիմա «Իմ քայլը» խմբակցության այն թեւերի մասին, որոնց գոյությունը ՔՊականները հրապարակային դաշտում եւ հերքում են, եւ հաստատում:

Եվ այսպես՝ Անդրանիկ Քոչարյանի թեւ. մինչեւ վերջին աղմուկը Քոչարյանի հետ անթաքույց մտերմություն էին անում, նրա սենյակում հաճախ հավաքվում էին.

Արթուր Հովհաննիսյանը,
Նարեկ Զեյնալյանը
Լուսինե Բաղալյանը
Ռուստամ Բաքոյանը
Արփի Դավոյանը
Արմեն Խաչատրյանը
Գագիկ Մելքոնյանը
Հովիկ Աղազարյանը
Ալխաս Ղազարյանը
Հակոբ Ասլանյանը

հիմա Քոչարյանի հետ շփումները պակասեցրել են.

Ռուստամ Բաքոյանը

Ալխաս Ղազարյանը
Արթուր Հովհաննիսյանը
Գագիկ Մելքոնյանը
Հակոբ Ասլանյանը

Արմեն Խաչատրյան ու Հովիկ Աղազարյանը զգուշավոր են դարձել: Վերջինս իր մանդատը պահելու խնդիր ունի:

Հակաքոչարյանական թեւը.

Հրաչյա Հակոբյան՝ Նիկոլ Փաշինյանի աներորդի

Սիսակ Գաբրիելյան, որոնց Քոչարյանը թիմի ներսում մեղադրում է ինչ ինչ անօրինական գործարքներում փոխկապակցության մեջ

Վիլեն Գաբրիելյան
Քրիստինա Պողոսյան
Ալեն Սիմոնյան

Էդգար Հակոբյան, որը Հրաչյա Հակոբյանի բարեկամն է,

Հայկ Ցիրունյանը եւ ողջ արեւմտյան թեւը, ինչպես նաեւ ՔՊ ակտիվը՝ գործադիր թեւից:

Ալեն Սիմոնյանի թեւ.

Հասմիկ Հակոբյան, որը երբեմն հայտնվում է Անդրանիկ Քոչարյանի տիրույթում, երբեմն՝ վտանգ զգալու դեպքում, վերադառնում ԱԺ աշխատակազմ

Էմմա Պալյան

ՔՊ Արեւմտյան թեւը, շատ կուռ է.

Մարիա Կարապետյան
Թագուհի Ղազարյան
Սարգիս Խանդանյան
Էդուարդ Աղաջանյան
Արման Եղոյան
Արսեն Թորոսյան

ՔՊ արտաքին ակտիվիստներ, որոնց միավորում են նաեւ ԱԺ գործուղումները, արտոնյալներ

Սոնա Ղազարյան
Արուսյակ Ջուլհակյան
Տիգրան Ավինյանի մտերիմ Ծովինար Վարդանյան
Հռիփսիմե Գրիգորյան
Վլադիմիր Վարդանյան
Ջարուհի Բաթոյան
Տաթեւիկ Գասպարյան

ՔՊ չկողմնորոշվածները, որոնք միշտ սպասում են իրադարձությունների զարգացմանը եւ գնում հոսանքի հետ.

Հակոբ Արշակյան
Բաբկեն Թունյան
Շիրակ Թորոսյան
Լիլիթ Ստեփանյան
Դավիթ Առուշանյան
Կարեն Սարուխանյան
Սերգեյ Բագրատյան
Ալեքսանդր Սանդիկով

Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննայի թեւը. Բացի եղբորից ու բարեկամից՝ տիկին Հակոբյանի հովանավորության տակ են.

Նարեկ Բաբայանը, նրա տիկին Լենա Նազարյանը

«Էրատո» ջոկատի անդամ, ազատամարտիկ Մերի Գալստյան

Հերիքնազ Տիգրանյան

Նիկոլ Փաշինյանի համար վստահելի գործընկերներ.

Վահե Ղալումյան
Խաչատուր Սուքիասյան
Լիլիթ Մինասյան
Արեն Մկրտչյան
Հայկ Սարգսյան
Տրդատ Սարգսյան

Բախտի բերմամբ պատգամավոր դարձած անտեղյակները.

Գայանե Եղիազարյան
Կնյազ Հասանով
Հռիփսիմե Հունանյան
Արմենուհի Ղազարյան
Մարինա Ղազարյան
Մարիամ Պողոսյան
Տիգրան Պարսիկյան
Նարեկ Ղահրամանյան
Միքայել Թումասյան
Դավիթ Կարապետյան
Լիլիթ Կիրակոսյան
Անուշ Քլոյան
Նարեկ Գրիգորյան
Դավիթ Դանիելյան

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԺ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԹՈՒՅԼ Է ՏՎԵԼ ԻՆՔՆԻՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 4-ին «Mediahub.am» լրատվական կայքի խմբագրությունն Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարից նամակ է ստացել՝ լրատվամիջոցի թղթակից Վահե Մակարյանի հավատարմագրումը խորհրդարանում դադարեցնելու մասին: Պատճառը հոկտեմբերի 31-ին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եւ Վահե Մակարյանի միջեւ տեղի ունեցած սկանդալային ընդհարումն է, որը լուսաբանվել է մի շարք ՁԼՄ-ներում:

Ըստ այդ հրապարակումների, երբ ԱԺ շենքում լրագրողը մոտեցել է խորհրդարանի ղեկավարին՝ մեկնաբանություն վերցնելու նպատակով, նրանց շփումը սկզբում ընթացել է կատակներով, սակայն հետո զրույցը վերածվել է փոխադարձ մեղադրանքների, իսկ ավելի ուշ՝ փողոցային բառապաշարով լեզվակռվի: Կոնֆլիկտը կասեցվել է անվտանգության աշխատակիցների միջամտությամբ: Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպություններս, արձանագրում ենք, որ վերջին տարիներին Ազգային ժողովում հաճախակի են դարձել նման միջադեպերը, երբ պատգամավորների եւ լրագրողների միջեւ լարված հարաբերություններում հատվում են քաղաքակիրթ հարաբերությունների սահմանները, եւ գործնական շփումները վերածվում են անթույլատրելի վեճերի՝ անհանդուրժողականության ծայրահեղ դրսեւորումներով: Հատկանշական է նաեւ, որ նման կոնֆլիկտներից հետո, որպես կանոն, պատասխանատվության են ենթարկվում միայն լրագրողները՝ զրկվելով ԱԺ-ում հավատարմագրումից: Իսկ անպարկեշտություն, ագրեսիվություն դրսեւորող ու պատգամավորական էթիկան կոպտորեն խախտող խորհրդարանականների համար նման միջադեպերը մնում են անհետեւանք: Այդպես եղավ նաեւ այս անգամ: Նկատելի է, որ ԱԺ աշխատակազմը Վահե Մակարյանին հավատարմագրումից զրկելիս ջանացել է իրավական հիմնավորումներ բերել դրա համար՝ հղում կատարելով ՀՀ ԱԺ լրագրողների հավատարմագրման կարգին եւ «Ջանգվածային լրատվության մասին» օրենքին: Մինչդեռ, այդ նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «...լրագրողին հավատարմագրած պետական մարմինը սեփական նախաձեռնությամբ հավատարմագրումը կարող է դադարեցնել միայն, եթե հավատարմագրման դադարեցման՝ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնների խախտման համար գրավոր նախազգուշացվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, լրագրողը կրկին խախտում է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնները»:

Խստորեն դատապարտելով տեղի ունեցածը՝ մենք պահանջում ենք.

ԱԺ աշխատակազմից՝ անհապաղ վերականգնել լրագրող Վահե Մակարյանի հավատարմագրումը խորհրդարանում,

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից՝ շտապ նախաձեռնել պատգամավորական էթիկայի հանձնաժողով ձեւավորելու գործընթաց, քննարկման առարկա դարձնել վերոհիշյալ միջադեպը եւ հրապարակավ գնահատական տալ Ալեն Սիմոնյանի վարվելակերպին:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, Երեւանի մամուլի ակումբ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ - հայաստան, Հանրային լրագրության ակումբ, «Լրագրողներ հանուն ապագայի» հկ, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հ/կ. Գորիսի մամուլի ակումբ

ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱԳՆ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ «ՎԻԶԱՆԵՐԻ ԲԻԶՆԵՍ» Է ԱՐԵԼ

Վերջինս ԱԳՆ ավտոմեքենայով ԱՄՆ դեսպանատուն է տարել քաղաքացիներին, բայց վիզա ստանալ չի հաջողվել:

Երբ քաղաքացիները հասկացել են, որ վերջնականապես խաբված են, պահանջել են իրենց գումարը նախ Նունեից, հետո Երջանիկից, ապա փոխանցել են պահանջը Վահան Կոստանյանին (ArmLur.am կայքի տեսանյութում կան դեպքի մանրամասները):

«Ժողովուրդ» օրաթերթն այս թեմայի վերաբերյալ 2 անգամ զրուցել է Նունե Սոֆյանի հետ, ով պահանջել է ոչինչ չհրապարակել իր անունից, քանի որ ինքը թույլ չի տալիս:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է նաեւ ՀՀ ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանին՝ պահանջելով պարզաբանել, թե իր վարորդի ենթադրյալ մեքենայություններից տեղյակ է արդյոք, ինչ մասնակցություն ունի այս պատմությանը եւ, որպես ՔՊ նախկին խոսնակ, ինչ գնահատական կտա այս՝ ակնհայտորեն կոռուպցիոն երեւույթի վերաբերյալ:

Կոստանյանը պատասխանել է, թե Երջանիկ Ումրշատյանն աշխատանքից ազատվել է մինչեւ իր փոխնախարար դառնալը, ապա տեղեկացրել, թե այս տարվա սեպտեմբերի 14-ին հաղորդում է ներկայացրել դատախազություն, երբ նրա անօրինականության մասին իմացել է. բայց ոչ մի գնահատական՝ այս երեւույթին:

Մինչդեռ ՀՀ ԱԳՆ-ից, «Ժողովուրդ» օրաթերթի մեկ այլ հարցմանն ի պատասխան, տեղեկացրել են տրամագծորեն հակառակի մասին. Ումրշատյանը 2022 թվականի մարտի 1-ից աշխատանքի է անցել ԱԳՆ-ում (փաստաթղթերը տեսանյութում ներկայացված են): Իսկ Վահան Կոստանյանի պատասխանում գրված է, որ Ումրշատյանը իր փոխնախարար նշանակվելու ժամանակ (2023 թվականի հունվարից) արդեն ազատված է եղել ԱԳՆ-ում վարորդի աշխատանքից եւ իր վարորդը չի եղել:

Նախարարության եւ փոխնախարար Կոստանյանի հակասական պատասխաններն արդեն իսկ կասկածահարույց են: Ինչո՞ւ է Կոստանյանը կտրուկ հրաժարվում վարորդ Ումրշատյանից, եթե մեզ դիմած քաղաքացիները պատմել են, որ տեսել են՝ ինչպես է նա իջել Ումրշատյանի ավտոմեքենայից ու աշխատանքի գնացել, իսկ վարորդը հանդիպել է քաղաքացիներին դիմացի այգում: Բայց առավել ուշագրավ է այն, որ ԱԳՆ-ն թաքցրել է պատճառը, թե ինչու է արտաքին գործերի նախարարության վարորդը օրերս ազատվել աշխատանքից:

Փաստն այն է, որ Արարատ Միրզոյանի ղեկավարած կառույցի աշխատակիցը օրեր առաջ՝ հոկտեմբերի 28-ից, անհետացել է ՀՀ-ից: Այսինքն՝ ԱԳՆ աշխատանքից ազատվելուց 3 օր հետո նա փախել է երկրից, որի մասով եւս պաշտոնական հարցում ենք արել:

«Ժողովուրդ» օրաթերթը նաեւ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին դիմեց՝ պարզելու, թե ինչ գործ է քննվում այս մասով, ովքեր կան ներգրավված. դատախազությունից, սակայն, լրացուցիչ 30 օր են խնդրել՝ պարզագույն այս հարցերին պատասխանելու համար: Եվ այս դանդաղկոտությունն է թերեւս պատճառը, որ Երջանիկ Ումրշատյանը հասցրեց հեռանալ Հայաստանից:

Իսկ սա ուղղակի հանցագործություն չէ, այլ ՀՀ պետական պաշտոնյաների ենթադրյալ ներգրավվածությամբ միջպետական սկանդալ. օտար երկրների դեսպանատները փաստացի փորձել են ներքաշել խարդախությունների մեջ, իսկ Նիդերլանդների դեպքում 8 հոգու վիզան ստացվել է 3 օրում:

Մանրամասները՝ ArmLur.am կայքի տեսանյութում

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԵԴ՝ «ԱՂՋԿԱ ՀԱՐՑՈՎ»

ԱՐԱՐԱՏՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐ ԵՆ ԴԱՆԱԿԱՀԱՐՎԵԼ

Նոյեմբերի 5-ին՝ ժամը 22:38-ին, «Վեդի» հիվանդանոցում գոտկային շրջանի կտրած-ծակած ու կրծքավանդակի կտրած-ծակած վերքերով բուժօգնության են տեղափոխվել Ա. Գ.-ն եւ Է. Հ.-ն:

Իրավապահները պարզել են, որ նույն օրը՝ ժամը 21:20-ին, Վեդի քաղաքի ավտոկայանում Է. Հ.-ն, Ա.Գ.-ն, Ա.Գ.-ն եւ անչափահաս 16-ամյա Է. Ե.-ն «աղջկա հարցի» առիթով վիճաբանել են 16 տարեկան անչափահաս Ա. Ա.-ի, 12 տարեկան անչափահաս Վ. Ղ.-ի հետ, որի ժամանակ Ա. Ա.-ն կտրող-ծակող առարկայով հարվածներ է հասցրել Է. Հ.-ին եւ Ա. Գ.-ին:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ Ա. Ա.-ին եւ հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՈՂԱՑԵԼ Է ԳՈՒՄԱՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳԻՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արթուր Խարախաշյանին մեղադրանք է առաջադրվել: Նա 2023 թվականի նոյեմբերի 5-ին՝ ժամը 06:00-ի սահմաններում, «****» ծառայությունից օգտվելու պատրվակով՝ գլխարկով, դիմակով եւ ձեռնոցներով մուտք է գործել Մարտա Գրիտչենկոյի կողմից վարձակալված Երեւան քաղաքի Բաղրամյան 64-րդ շենքի 13-րդ բնակարան:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Խարախաշյանը մարմնական վնասվածք պատճառելու նպատակով նախապես հարմարեցված առարկայի՝ էլեկտրահարող սարքի միջոցով բռնություն է գործադրել, դուռը Մարտա Գրիտչենկոյի կողմից բացելուց հետո հրել է վերջինիս, ինչի հետեւանքով Մարտա Գրիտչենկոն վայր է ընկել: Արթուր Խարախաշյանը ոտքով սեղմել է կնոջ դեմքին եւ էլեկտրահարող սարքով երկու անգամ էլեկտրահարել մեջքի հատվածից, որից հետո հրելով տարել է նշված բնակարանի ննջասենյակ, էլեկտրահարող սարքով եւ ներարկիչով բռնություն գործադրելու իրական եւ առկա սպառնալիք է տվել Գրիտչենկոյին՝ պահանջելով իրեն տրամադրել իր մոտ առկա ողջ գումարը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ կինը Արթուր Խարախաշյանին է տվել իր մոտ առկա 220.000 ՀՀ դրամը, 400 ԱՄՆ դոլարը եւ Iphone 11 մոդելի բջջային հեռախոսը, որը Արթուր Խարախաշյանի կողմից հափշտակվել է: Դրանից հետո, չհավատալով, որ Մարտա Գրիտչենկոյի մոտ այլեւս գումար չկա, իր մոտ եղած պարաններով կապել է կնոջ ձեռքերը եւ ոտքերը՝ սկսելով էլեկտրահարել նրան, եւ շարունակել փնտրել գումար: Փնտրելու ընթացքում տղամարդը պահարանում նկատել է Մարտա Գրիտչենկոյին պատկանող Բելառուսի Հանրապետության քաղաքացու անձնագիրը, հափշտակել այն եւ հեռացել:

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿՌՎԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՄԱՐ

«Դոմոդեդովո» օդանավակայանում ձերբակալվել է ՀՀ քաղաքացի, որը կռվել է Ուկրաինայի զինված ուժերի կողմից Դոնեցկի եւ Լուգանսկի Ժողովրդական Հանրապետություններում, ինչպես նաեւ Խերսոնի մարզում: Այս մասին РИА Новости-ին հայտնել են Ռուսաստանի Քննչական կոմիտեի մամուլի ծառայությունից:

Հետաքննության տվյալներով՝ 2022 թվականի նոյեմբերին Հայաստանի քաղաքացի Արմեն Բալյանը Մոլդովայի սահմանով մեկնել է Ուկրաինա, որտեղ տարածքային պաշտպանության ստորաբաժանումների կազմում գումարի դիմաց մասնակցել է մարտերին՝ Դոնեցկի եւ Լուգանսկի Ժողովրդական Հանրապետություններում, ինչպես նաեւ Խերսոնի մարզում՝ մինչեւ 2023 թվականի դեկտեմբեր:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 80 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉԳԻՏԵ՞Ն, ՈՐ ՍՏԵՐԾԱՑՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՇՆԵՐՆ ԱԳՐԵՍԻՎԱՆՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզպետարանը հայտնում է, որ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում, նախարար Գնել Սանոսյանի գլխավորությամբ եւ մարզպետների մասնակցությամբ կայացած հերթական խորհրդակցությունը, ուր անդրադարձ է կատարվել ԱԺ պատգամավորների կողմից ներկայացված «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի եւ հարակից օրենքների նախագծին, քննարկվել է համայնքներում թափառող շների վերաբերյալ խնդիրը: Հայտնի չէ, թե թափառող շների մասին այդ խորհրդակցությունում ի՞նչ որոշում է ընդունվել: Նախարար Սանոսյանը, մարզպետները թափառող, շների գծով մասնագե՞տ են, գիտե՞ն, որ այդ շներին ստերջացնելուց հետո նրանք ավելի ագրեսիվ են դառնում մարդկանց հանդեպ: Մինչդեռ խնդիրը հրատապ լուծում է պահանջում, թափառող շները շատ են բազմացել, նրանք պարբերաբար հարձակվում են բնակիչների վրա: Նախորդ տարիներին Տավուշի մարզի տարբեր քաղաքներում եւ գյուղերում տեղի են ունցել թափառող շների կողմից բնակիչների, հաճախ՝ փոքրահասակ երեխաների վրա հարձակման, մարմնական տարբեր վնասվածքներ հասցնելու բազմաթիվ դեպքեր: Դիլիջան քաղաքը նախկին ԽՍՀՄ երկրների բնակիչների նախընտրած զբոսաշրջային ուղղություններից է, ամեն տարի հազարավոր զբոսաշրջիկներ են ժամանում Դիլիջան: Թափառող շները դարձել են զբոսաշրջային քաղաք Դիլիջանի այցեքարտերից մեկը, զբոսաշրջիկները զարմանքով են նայում քաղաքի կենտրոնում թափառող շներին:

ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ 100 ՏՈԿՈՍԻ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԱՌԱՔԱՐԿ

Տավուշի մարզպետարանը տեղեկացնում է, որ նոյեմբերի 4-ին կայացել է Տավուշի մարզի խորհրդի նիստ, որի ընթացքում մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ասքանազ Բաբլումյանը «ներկայացրեց 10 ամսվա կտրվածքով Տավուշի մարզի համայնքների տեղական բյուջեների սեփական եկամուտների կատարողականը: Նշվեց,պոր նոյեմբերի 1-ի դրությամբ հավաքագրվել է 1 միլիարդ 431 միլիոն դրամ, որը կազմում է նախատեսվածի 67 տոկոսը: Առաջարկվեց մինչեւ տարեվերջ հասնել 100 հավաքագրման»: ՔՊ-ական իշխանությունը Հայաստանում ոտնահարել է տեղական ինքնակառավարումը, համայնքապետարանների ինքնուրույնությունը: Առանց մարզպետարանի առաջարկության էլ մարզի համայնքների ղեկավարները գիտակցում են սեփական եկամուտների հավաքագրման կարեւորությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՌՈՒՍ ՄՈԴԵԼԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԴԱՏԻ ՏԱԼ...

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԿԱՆԴԱԼԱՅԻՆ ԴԵՊՔԻՑ

«Միսս տիեզերք» միջազգային գեղեցկության մրցույթը բավականին մեծ աղմուկ բարձրացրեց տարածաշրջանում, քանի որ Հայաստանը պետք է ներկայացներ ազգությամբ ռուս մոդել Իրինա Զախարովան, սակայն ամեն բան այդքան էլ հարթ չընթացավ, ինչպես հնարավոր է, որ սպասում էին շատերը:

Հոկտեմբերի 23-ին պարզ դարձավ, որ ազգությամբ ռուս մոդել Իրինա Զախարովան չի ներկայացնելու Հայաստանը գեղեցկության մրցույթում, քանի որ մրցույթի կազմակերպիչների մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում որոշվել է, որ Զախարովան չի բավարարում «Միսս տիեզերք» մրցույթի նախնական լիցենզիայի պայմանագրի 8.02 կետով նախատեսված պահանջներին: Ըստ այդ կետի՝ մասնակիցը պետք է ունենա վավերական անձնագիր, որը տրված է այն երկրի կողմից, որը նա ներկայացնում է մրցույթում:

«Միսս Երեւան փրոդաքշընս»-ի գործադիր տնօրեն Արմինե Մուրադյանն ArmLur.am-ի հետ զրույցում նշեց, որ, այո, Զախարովան Հայաստանի քաղաքացիություն չունի:

«Մեր ունեցած տեղեկությամբ՝ նա Հայաստանի քաղաքացիություն չի ունեցել եւ ազգությամբ էլ հայ չէ, իսկ «Միսս տիեզերք»-ի հստակ կանոններից է, որ անպայման տվյալ երկրի քաղաքացիություն ունենա մասնակիցը: Ով այս տարի «Միսս տիեզերք»-ի լիցենզիա է ձեռք բերել, մենք իրենց հետ կապ ենք հաստատել եւ ասել ենք, որ այս պահին մենք ունենք մասնակից, որը Miss Grand International մրցույթին է մասնակցում, եւ անմիջապես՝ վերադառնալուց հետո, մենք պատրաստ ենք ամբողջովին վճարել «Միսս տիեզերք»-ի լիցենզիայի համար:

Ամենակարեւորը՝ այստեղ պետության անունն է դրված. մեզ համար դա էր ամենամեծ խնդիրը, որ մեր պետությունից գոնե հայ մասնակից գնար: Մենք միակն էինք Հայաստանում, որ ունեինք «պատրաստի» մասնակից, որը լիարժեք կարող էր վերադառնալ եւ հաջորդ օրը մեկնել Մեքսիկա: Նույնիսկ վիզայի հարցերն ենք լուծել, այսինքն՝ մեր բոլոր ռեսուրսները օգտագործել էինք դրա համար, միայն թե Հայաստանից ազգությամբ հայ մասնակից ներկայացնեինք, խայտառակություն չլիներ: Յուլիա Պավլիկովան լիցենզիա ձեռք բերած ռուս մասնակցին եւս չի ներկայացրել մրցույթի օրենքների մասին: Ինքը, միեւնույնն է, չի կարող գնալ, որովհետեւ խնդիր կա: Իմ ոչ հավաստի աղբյուրներից կարող եմ ասել, որ Զախարովան, ով պետք է մասնակցեր մրցույթին, նույնիսկ պատրաստվում է դատի տալ եւ, կարծեմ, արդեն դատի է տվել այդ Յուլիային: Այստեղ եւ մենք ենք տուժել, եւ պետության անունն է տուժել, եւ ռուս մասնակիցն է տուժել: Ռուս մասնակիցը շատ լավ պատրաստված է եղել, մոտ 30-35 հազար դոլարի ծախս է արել: Ստացվում է այնպես, որ այդ Յուլիան լիցենզիան վերցրել է ու խաբել է բոլորիս: Այն հովանավորները, որոնք Յուլիային օգնել էին, պատրաստ էին նաեւ մեզ հետ աշխատել, աջակցել, որ միայն թե մրցույթին գնանք: Բայց այստեղ Յուլիա Պավլիկովայի պատճառով, ստացվում է, որ բոլորիս մատների վրա պտտեցրին»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մանրամասնեց Արմինե Մուրադյանը:

Անդրադառնալով նաեւ նոր մասնակցին՝ Էմմա Ավանեսյանին, ով ներկայացնելու է Հայաստանը գեղեցկության միջազգային մրցույթում, Արմինե Մուրադյանն ասաց, որ «Միսս Երեւան փրոդաքշն»-ից ոչ ոք չի ճանաչում իրեն:

«Ազգությամբ հայուհի է, 32 տարեկան: Ոչ ոք իրեն չի ճանաչում: «Միսս տիեզերք» գեղեցկության մրցույթն այս տարի ընդհանրապես ստանդարտներ չունի՝ տարիք, հասակ, ամուսնացած, չամուսնացած, երեխա ունի, չունի, նույնիսկ՝ հղի է թե ոչ: Բացարձակ ստանդարտներ չկան: Եթե մեր համաձայնությամբ լիներ ինչ-որ մեկի մասնակցությունը մրցույթին, մենք ոչինչ չէինք ձեռնարկի, նույնիսկ ով ուզեր՝ կգնար, բայց քանի տարի է՝ պայքարում ենք, որ մեր երկիրն այդ մեծ հարթակում լավ մասնակից ներկայացնի: Մենք Գոհար Հարությունյանի հետ ընտրած թիմ ունենք դեռեւս նախկին մրցույթներից. այսինքն՝ մենք միշտ համագործակցում ենք, փորձում ենք ոլորտը կարգավորել: Այն, ինչը տեղի է ունեցել եւ իրենք լիցենզիան ձեռք են բերել, անկառավարելի է, ոչինչ չենք կարող անել: Աուկցիոնով են ձեռք են բերել՝ իրենց ասելով:

Մենք համակերպվենք թե չհամակերպվենք՝ իրենք վճարել են, լիցենզիան ստացել են, դրա վերաբերյալ որեւէ մեկս ոչինչ չենք կարող անել մինչեւ պետությունը այդ խնդրի առթիվ քայլեր չձեռնարկի, որի մասին մենք բազմիցս ենք խոսել: Պետության կողմից այս ոլորտը ընդհանրապես չի կառավարվում, եւ եթե չի վերահսկվում, ցանկացած մարդ կարող է գնալ մեր երկրի անունից, որն աբսուրդ է ուղղակի»,- զրույցն ավարտելով ասաց «Միսս Երեւան փրոդաքշն»-ի գործադիր տնօրեն Արմինե Մուրադյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

ԿԱՅԱՑԵԼ Է «ԲԱՐԴԵՐԻ» ԱԿՈՒՄԲԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ

«Ֆասթ» բանկի աջակցությամբ օրերս Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում տեղի է ունեցել «Բարդերի» ակումբի հեղինակային երգի բարեգործական երեկոն: Բարեգործական համերգի ողջ հասույթն ուղղվելու է «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամին: Հեղինակային երգի հարթակն այս անգամ հայտնի երգահաններ կիսել են երիտասարդ սերնդի ներկայացուցիչների հետ, որոնք հաղթահարել են «Ֆասթ» բանկի աջակցությամբ կայացած փառատոնային մրցույթը:

«Բարդերի» ակումբի հիմնադիր, երգահան Վախթանգ Հարությունյանն ընդգծել է, որ երեկոն ծառայելու է տարեցներին տաք սնունդ մատակարարելու գործին, որն իրականացնում է «Հուսո տուն բարեգործական կենտրոնը». «Ես իմ շնորհակալություն եմ ուզում հայտնել «Ֆասթ» բանկին այս տարվա մեր ամբողջ համերգային եւ փառատոնային ծրագրերին աջակցելու համար: Շնորհիվ այդ աջակցության մենք այսօր հնարավորություն ենք ստացել չորս բարեգործական համերգ կազմակերպելու եւ մեկ բավականին ծավալուն փառատոն ունենալու, որի շնորհիվ ունեցել ենք ավելի քան 20-30 տաղանդավոր երիտասարդի հայտնաբերում: Այն հանրօգուտ աշխատանքը, որը մենք արել ենք, դա հենց բանկի հետ համագործակցության արդյունքում է», - ասել է նա:

Երգահան Էդուարդ Զորիկյանը նշել է, որ այս բարեգործական համերգը փոքրիկ լումա է մեծ գործի մեջ. ««Բարդերի» ակումբն անհատների միություն է: Մենք ժամանակ առ ժամանակ հավաքվում ենք ինչ-որ մի գործի շուրջ, այս անգամ առիթը համերգի տեսքով օգնությունն է, պարզ ասենք՝ գումար աշխատել եւ գումար փոխանցել: «Ֆասթ» բանկը մշտապես եղել է մեր կողքին», - ասել է Էդուարդ Զորիկյանը:

«Ֆասթ» բանկը տարիներ շարունակ աջակցում է «Բարդերի» ակումբի նախագծերին եւ շարունակաբար ներդրումներ է կատարում Հայաստանի մշակութային ոլորտում:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 2 մարդ զոհվել է, 23-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, քաղաք Նոյեմբերյան, 26 Կոմիսարների փողոց, 3/1 հասցեում գտնվող 353.86 ք.մ. բնակելի տուն, 80.7 ք.մ. ավտոտնակ, 49.5 ք.մ. անասնաշենք, 8.91 ք.մ. սանհանգույց եւ 0.246 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝31300000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 25.11.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝25.12.2024թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Դրոյի փողոց, 4 շենք, 36 հասցեում գտնվող 73,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17911717 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 25.11.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 25.12.2024թ.- ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ՝ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Հայաստանի ֆոնդային բորսայի (AMX) եւ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից անցկացվող՝ լավագույն ֆինանսական կազմակերպությունների ամենամյա մրցանակաբաշխության արդյունքներով՝ «Արդշինբանկը» ճանաչվել է կորպորատիվ պարտատոմսերի երկրորդային շուկայի առաջատար: Հիշեցնենք, որ լավագույն դիլերը ընտրվում է AMX-ի անդամ հանդիսացող Հայաստանի բանկերի եւ ներդրումային կազմակերպությունների դիլերների ընդհանուր քվեարկության հիման վրա:

Հայաստանի ֆոնդային բորսայի գործադիր տնօրեն Հայկ Եգանյանը նշել է. «2024 թվականի մրցանակաբաշխությունը ցույց տվեց Հայաստանի կապիտալի շուկայի աճող դինամիկան եւ մասնակիցների՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու պատրաստակամությունը: Մրցանակակիրների հաջողությունները նպաստում են Հայաստանի ֆինանսական շուկայի հանդեպ տեղական եւ միջազգային ներդրողների վստահության ամրապնդմանը»:

«Արդշինբանկը» շնորհակալություն է հայտնել մրցանակաբաշխության կազմակերպիչներին՝ օբյեկտիվ գնահատականի համար՝ նշելով, որ այս մրցանակը բանկի աշխատակիցների եւ հաճախորդների նվաճումն է: Բանկը նաեւ վստահեցրել է, որ շարունակելու է ընդլայնել իր ներդրումային բիզնեսը՝ նպատակ ունենալով ձեւավորել զարգացած կապիտալի շուկա, ապահովել հաճախորդների բարեկեցությունը եւ Հայաստանի տնտեսության ընդհանուր բարօրությունը:

Հիշեցնենք, որ 2020 թվականին Financial Times հրատարակչության The Banker ամսագիրը Արդշինբանկի եվրապարտատոմսերի թողարկումը ճանաչեց որպես Եվրոպայի տարվա գործարք: «Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Կենտրոն, Հրազդանի կիրճ, 81 հասցեում գտնվող 32,6 ք.մ. հասարակական շինություն, 29,1 քմ ծածկ, աստիճանահարթակ, 17,2 քմ /56,8 խմ/ պարիսպ եւ 0,047629 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 39000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ծ. Իսակովի պողոտա, 13/5 հասցեում գտնվող 0,4475 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 420000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 25.11.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԿՈԼՈՐԻՏԸ

ՖԻԼՄԵՐ, ՈՐՈՆՔ ԴԱՐՁԵԼ ԵՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԱՅՑԵՔԱՐՏԸ

Գյումրին հայ իրականության ամենահետաքրքիր քաղաքներից մեկն է, որը ոչ միայն պահպանել է իր դիմագիծը, այլ, հակառակ փորձություններին ու արհավիրքներին, անդադար վերականգնում է պատմական իր դեմքն ու շունչը:

Այն այսօր Հայաստանի երկրորդ քաղաքն է՝ հաջորդելով մայրաքաղաք Երեւանին:

Երբեմնի Ալեքսանդրապոլն այսօր լի է գեղեցիկ վայրերով, պատմամշակութային հուշարձաններով, ժամանցի վայրերով եւ թանգարաններով, հայտնի՝ Չերքեզի Զորով, Կարմիր Բերդով եւ Զիթողցյանների առանձնատնով, ինչպես նաեւ մշակույթի, արվեստի եւ արհեստի ու սպորտի ոլորտներում հայտնի մեծ անուններով:

Սակայն Գյումրին իր բոլոր հանճարներից եւ պատմամշակութային վայրերից զատ հիշվում է «Հայֆիլմ» կինոստուդիայի ֆիլմերից: Հենց այս ֆիլմերում է ամենավառը երեւում Գյումրու շունչն ու հոգին: Հենց այս ֆիլմերի ստեղծման ընթացքում նկարահանման հրապարակ դարձած բակերը, փողոցներն ու շենքերն են այսօր ամենաշատը «կանչում» Գյումրի:

Այստեղ ամենահայտնի պատշգամբներից մեկը Հենրիկ Մալյանի «Եռանկյունի» ֆիլմի պատշգամբն է: Այն այսօր զարդարում է ֆիլմի հերոսների պատկերներով մի պաստառ: Եռանկյունուի պատշգամբն էլ հենց հրավիրում է Գյումի՝ այն տեսնելու եւ քաղաքի անցյալի եւ մշակութային կյանքի մասը դառնալու:

Ֆիլմը կյանքի եւ ընկերության պատմություն է 5 դարբնի միջեւ, պատերազմի ժամանակ, պատմված դարբիններից մեկի որդու շուրթերով: Եռանկյունաձեւ պատշգամբում մարդիկ աշխատում են, երազում, սիրում, հիշում իրենց կորուստները եւ սրբորեն պահպանում «համայնքի բարոյական ավանդները»:

Ֆիլմի պրեմիերան կայացել է 1967 թվականի հենց այս օրը: 1968 թվականին ֆիլմն արժանացել է Անդրկովկասի Ուկրաինայի կինոփառատոնի «Պրոմեթեւս» գլխավոր մրցանակին, նույն թվականին Լենինգրադում կայացած Համամիութենական փառատոնի արդիական թեմայի լավագույն մարմնավորման համար մրցանակին: Ա. Այվազյազնին, Հ. Մալյանին, Ի. Իսրաելյանին, Ա. Ջիգարխանյանին, Ս. Սարգսյանին եւ Մ. Մկրտչյանին 1975 թվականին շնորհվել է ՀՍՍՀ Պետական մրցանակ՝ «Եռանկյունին» ֆիլմի ստեղծման համար:

Գյումրու մասին ամենաշատը պատմող ու քաղաքի մշակույթը ներկայացնող ամենալավ ֆիլմերից մեկը Ալբերտ Մկրտչյանի «Մեր մանկության տանգոն» ֆիլմն է, որը ոչ միայն քաղաքի այցեքարտն է, այլեւ Մեր Մկրտչյան դերասանի «դեմքն» ու կյանքի լավագույն աշխատանքներից մեկը:

Ֆիլմում, որը էկրաններ է բարձրացել 1984 թվականին, երեք երեխաների մայրը, որը միայնակ է մեծացրել երեխաներին, փորձում է վերադարձնել ամուսնուն, ով պատերազմից հետո կյանքը կապել է այլ կնոջ հետ:

Ֆիլմը ոչ միայն Մեր Մկրտչյանի եւ եղբոր՝ ռեժիսոր Ալբերտ Մկրտչյանի մասին է, այլ նաեւ գլխավոր հերոսուհուն մարմնավորող Գալյա Նովենցի մասնագիտական կյանքում մեծ հետք է թողել:

Գյումրու կյանքի եւ մարդկանց բնորոշ վարքագծի մասին ամենալավը պատմում է «Հին օրերի երգը» ֆիլմը, որը նույնպես Ալբերտ Մկրչյանի հեղինակային աշխատանքն է: Այն լավագույնս պատմում է պատերազմի հետեւանքով մարդկանց կրած կորստի ու ցավի մասին: Գլխավոր հերոս փոստատար Նիկոլին մարմնավորում է Մեր Մկրտչյանը: Նա ամբողջ ընթացքում տանջվում է, որ ողջ է վերադարձել պատերազմից եւ չի կարողանում ամեն անգամ սեւ թուղթ բերել որդեկորույս մայրերին՝ մինչեւ մի օր ուտում է Հայաստան մայրիկին իր որդու մահվան բոթը հայտնող թուղթը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՎ ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

ԻՆՍՏԱԼԱՑԻԱ-ՊԵՐՖՈՐՄԱՆՍ «ՔՈՉԱՐ 360º»

Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակի շրջանակում Հայաստանի ազգային պատկերասահում նոյեմբերի 6-ին եւ 7-ին կներկայացվի «ՔՈՉԱՐ 360º» ինստալացիա-պերֆորմանսը:

Այն իրականացրել է «Արտ-Իմաժ» մշակութային հասարակական կազմակերպությունը՝ Երվանդ Քոչարի թանգարանի, ֆրանսիական «Սաթէ-Աթոը» թատերական միության, «Կաֆիգ» պարային ընկերության հետ համագործակցությամբ:

«ՔՈՉԱՐ 360º» բազմաժանր նախագիծը պարի, կենդանի երաժշտության, վիդեո պրոեկցիայի միաձուլում է՝ներկայացնելու Երվանդ Քոչարի պատկերային ու տարածական մտածողությունը:

Այն ֆրանսիացի նշանավոր պարուսույց Մուրադ Մերզուկիի եւ ռեժիսոր Սաթէ Խաչատրյանի երկրորդ համագործակցությունն է: Առաջինը Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված «Նռան գույնը» պարային ներկայացումն էր, որը ցուցադրվել է Երեւանում 2024 թվականի մարտին:

«ՔՈՉԱՐ 360º» նախագծի իրականացնողներն են՝

. Գաղափարի եւ դրամատուրգիական կոնցեպտի հեղինակ՝ Սաթէ Խաչատրյան

. Պարուսույց՝ Մուրադ Մերզուկի

. Ինստալացիայի հեղինակ՝ Աշոտ Մարաբյան

. Երաժշտության հեղինակ՝ Հող Արթուն

. Վիդեո - մափինգ՝ Արտյոմ Բաղդասարյան

. Հագուստների ձեւավորում՝ Էդգար Մանուկյան, Կարեն Դոլուխանյան

. Պարուհիներ՝ Շառլոտ Գարբան, Ալիզե Բրյուլ, Աննա Քալաշյան

. Երգչուհի՝ Լիլիթ Խաչատրյան

ՀՀ ԿԳՄՍՆ

Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՄԱՐՔԱԿԱՆ

ԽԱՉԱՆՈՎԸ ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

Հայկական արմատներով ռուս թենիսիստ Կարեն Խաչանովը խոսել է աջ ոտքի վնասվածքի մասին, որը ստացել է ֆրանսիացի Ուգո Համբերտի հետ Փարիզում ընթացող Մասթերսի կիսաեզրափակիչ խաղում (7:6 (8:6), 4:6, 3:6):

«Հիմա խառը զգացողություններ ունեմ: Ես հաճույք ստացա խաղից եւ շատ լավ հանդես եկա վերջին շաբաթներին: Ամոթ է այսպես ավարտվել:

Ես գիտեմ, որ վնասվածքները սպորտի մի մասն են, եւ դրա դեմ ոչինչ անել հնարավոր չէ: Կարող եմ միայն ասել, որ փորձել եմ պայքարել մինչեւ վերջ: Ես գնացի բժշկի եւ աջ ոտքիս երկու տեղից 2-րդ աստիճանի լարվածություն ունեմ: Այսպիսով, այժմ ժամանակն է վերականգնվելու եւ ընտանիքի հետ հանգստանալու՝ մինչեւ միջմրցաշրջանային հատվածի մեկնարկը: Շնորհակալություն բոլորիդ աջակցության համար»,- գրել է Խաչանովը սոցցանցերում:

«ՆՈԱՆ» ՄԵԿՆԵԼ Է ԼՈՆԴՈՆ

«Նոան» երեկ չարթերային թռիչքով մեկնել է Լոնդոն, որտեղ այսօր՝ նոյեմբերի 7-ին, Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլի երրորդ տուրում կմրցի «Չելսիի» հետ:

«Սթեմֆորդ Բրիջ» մարզադաշտում կայանալիք խաղը կմեկնարկի ուղիղ կեսգիշերին:

«ՌԵԱԼ ՄԱԴՐԻԴ»–«ՄԻԼԱՆ» ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՄԵԿ ՐՈՊԵ ԼՌՈՒԹՅԱՄԲ...

ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի ընդհանուր փուլի 4-րդ տուրի հանդիպումը, որում կհանդիպեն Մադրիդի «Ռեալն» ու «Միլանը», կսկսվի մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ Իսպանիայում «Դանա» փոթորկի զոհերի:

««Սանտյագո Բեռնաբեուում» Չեմպիոնների լիգայի «Ռեալ Մադրիդ» - «Միլան» խաղի մեկնարկից առաջ մեկ րոպե լռությամբ կհարգվի «Դանա» փոթորկի զոհերի հիշատակը, որից տուժել են Իսպանիայի մի քանի շրջաններ», - ասվում է ակումբի մամուլի ծառայության հաղորդագրության մեջ:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ տուժած շրջաններում ջրով լցվել են ճանապարհներ, վնասվել են տներ եւ մեքենաներ: Մի քանի հարյուր մարդ արգելափակվել է ջրհեղեղի պատճառով: Վալենսիայում մի քանի հազար տուն հոսանքազրկվել է:

● *Նոյեմբերի 8-ին՝ ժամը 15:00-ին, Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում կցուցադրվի «Խենթը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Լիլիթ Մարկոսյան
(47 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Մարկոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն): Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել, թե որոնք են ծննդի պետական գրանցման հիմքերը:

Լարիսա Պետրոսյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ ծննդի պետական գրանցման հիմքերն են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին սահմանված ձեւի բժշկական փաստաթուղթը,

2) օտարերկրյա պետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին բժշկական փաստաթուղթը,

3) երեխայի ծննդյան փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը,

4) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը,

5) օտարերկրյա պետությունում ծնված անձի՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայականը եւ ծնունդը հիմնավորող այլ փաստաթղթեր:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծննդի պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այս տարի մեծ շուքով նշվում է ոչ միայն տաղանդավոր նկարիչ, քանդակագործ Երվանդ Քոչարի 125 ամյակը, այլեւ երեկ արվեստասերները տոնում էին նաեւ Երվանդ Քոչարի ամենատպավորիչ աշխատանքներից մեկի՝ «Սասունցի Դավիթ» արձանի տեղադրման 65-րդ տարին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*